Արձանագրություն N 3

2024 թվականի առողջապահության նախարարության կարիքների համար անհրաժեշտ դեղերի (տուբերկուլին) ձեռք բերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/12» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

30» «Հունվարի» 2024թ.
ժամը 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ	Հ. Արույան
Հանձնաժողովի անդամներ	Ռ. Դոխոլյան, Լ. Սարատիկյան
Հանձնաժողովի քարտուղար	Հ. Սարգսյան

1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Հ. Արույան)

Ընդունել ի գիտություն, որ 13.11.23թ. հրապարակվել է հրավեր էլեկտրոնային աճուրդ համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2023 թվականի նոյեմբերի 28-ին, ժամը 12:00-ին, իսկ հակադարձ աճուրդի մեկնարկը՝ 2023 թվականի նոյեմբերի 29-ին ժամը 12:00-ին: 2023 թվականի նոյեմբերի 30-ին ժամը 12:00-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացելու նպատակով:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Կազմակերպության էլ. հասցե	Կազմակերպության ՀՎՀՀ
1	«Նատալի Ֆարմ» ՍՊԸ	natalipharm@bk.ru	01222567
2	«Ագաստ» ՍՊԸ	agastllc@mail.ru	00435781

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Հ. Արույան)

Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ «Ագաստ» կողմից ներկայացված ծրարում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, սակայն ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Մանավորապես մասնակցի կողմից ներկայացված հայտը գնահատելիս հանձնաժողովը արձանագրել էր մի քանի անհամապատասխանություններ, որոնք ենթակա էին ուղղման: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ և գնման ընթացակարգի հրավերի 8.11 կետերի պահանջները գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել էր հայտերի գնահատումը և էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարը 26.01.2024թ. ծանուցել էր «Ագաստ» ՍՊԸ-ին արձանագրված անճշտությունների մասին՝

«Ագաստ» ՍՊԸ

Հարգելի մասնակից:

«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/12» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով Ձեր կողմից ներկայացված մասնակցության հայտը, արձանագրել է անհամապատասխանություններ, որոնք ենթակա են շտկման: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները խնդրում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել Ձեր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (տեխնիկական բնութագիրը) մասնավորապես՝ շտկել և ճիշտ ներկայացնել Ձեր կողմից առաջարկվող ապրանքի հստակ ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը և արտադրողի հստակ անվանումը: Շտկված տարբերակները ներբեռնել էլեկտրոնային աուդիտ համակարգ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին

(Հ. Արույան)

Սահմանված ժամկետում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները «Ագաստ» ՍՊԸ-ի կողմից շտկվել են և շտկված տարբերակները ներբեռնվել են էլեկտրոնային աուդիտ համակարգ, որից հետո «Ագաստ» ՍՊԸ-ի հայտը գնահատող հանձնաժողովը գնահատել է բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Մասնակիցների առաջարկած գների մասին

(Հ. Արույան)

Մասնակիցների կողմից առաջարկած գները 29.11.2023թ. կայացած հակադարձ աուդիտից հետո ներկայացվում են կից ֆայլով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Հրավերի վերաբերյալ հարցումների և պանգաբանումների մասին

(Հ. Արույան)

Հրավերի վերաբերյալ ներկայացվել է հետևյալ հարցումը՝

«Հարգելի պատվիրատու Խնդրում ենք տեղեկացնել ինչի համար եք տեխնիկական բնութագրում նշել հենց 2ՏՄ/0.1մլ, դրանով իսկ սահմանափակելով մասնակիցների քանակը, այն դեպքում, երբ տարիներ շարունակ ՀՀ-ում Ձեր իսկ կողմից ձեռք է բերվել և օգտագործվել է Բուլղարական Տուրբերկուլինը, որը պարունակել է 5ՏՄ/0.1մլ: Հենց ամբողջ Եվրոպական երկրները աշխատում են 5ՏՄ/0.1մլ-ով: Նախկինում Ձեր կողմից չի նշվել <<2ՏՄ/0.1մլ>> գրառումը տեխ բնութագրում, իսկ այժմ Դուք սահմանափակում եք Եվրոպական արտադրողների մասնակցությունը սույն գնման գործընթացին:»

Տրամադրվել է հետևյալ պարզաբանումը.

«Հարգելի մասնակից: Ջանգվածային հետազոտության նպատակով առավել կիրառելի է միջ մակային Մանթու-ի փորձը որը տրվում է «2ՏՄ/0.1մլ»:»

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Ընթացակարգի ամփոփման մասին

(Հ. Արույան)

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման պահանջները, 26.01.2024թ. կայացած արտահերթ նիստի ժամանակ կայացած որոշումը և մասնակցի կողմից ներկայացված հայտը՝

Որոշվեց. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/12» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել, հաղթող ճանաչել և կնքել պայմանագիր՝

- «Ագաստ» ՍՊԸ-ն 15,003,600 ՀՀ դրամ պայմանագրային գումարով:

Որոշվեց. Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները մերժել «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի հայտը:

Որոշվեց. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/12» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ սահմանել 31.01.2024թ-ից մինչև 09.02.2024թ. ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Հ. Արույան

Անդամներ՝ ---------- Ռ. Դոխոլյան

---------- Լ. Սարատիկյան

Քարտուղար՝ ---------- Հ. Սարգսյան

2024 թվականի կարիքների համար ձեռք բերվելիք տուբերկուլինի վերաբերյալ
վերջնական գներով 29.11.23թ. Կայացած հակադարձ աճուրդից հետո

NN	Դեղի անվանումը	Քանակ	Նախահաշվային		«Ագաստ» ՍՊԸ					«Նատալի Ֆարմ» ՍՊԸ				
					Վերջնական առաջարկ					Վերջնական առաջարկ				
			Միավորի գին	Գումար	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով
1	Տուբերկուլին	5,500	2,728.00	15,004,000	12,503,000	2,500,600	15,003,600	2,273.27	2,727.93	15,004,000	0	15,004,000	2,728.00	2,728.00